

«Եվրասիական
տնտեսական միության
մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաների կազմակերպման,
կառավարման, գործունեության եւ զարգացման կարգի մասին**

1. «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 79-րդ, 80-րդ եւ 84-րդ հոդվածների համաձայն՝ սույն Արձանագրությամբ սահմանվում են նավթային ոլորտում համագործակցության հիմքերը, Միության՝ նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկայի ձեւավորման սկզբունքները, ինչպես նաեւ նավթի ու նավթամթերքի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման սկզբունքները:

Սույն Արձանագրությունը մշակվել է՝ հաշվի առնելով «Եվրասիական տնտեսական համայնքի անդամ պետությունների ընդհանուր էներգետիկ շուկայի ձեւավորման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի հայեցակարգի դրույթները՝ անդամ պետությունների վառելիքաէներգետիկ համալիրների ներուժի արդյունավետ օգտագործման, ինչպես նաեւ ազգային տնտեսությունները նավթով եւ նավթամթերքով ապահովելու նպատակներով:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«նավթի եւ նավթամթերքի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիություն»՝ անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից կառավարվող՝ նավթի ու նավթամթերքի փոխադրման համակարգերի օգտագործման իրավունքի տրամադրում նավթի ու նավթամթերքի փոխադրման նպատակով,

«նավթ եւ նավթամթերք»՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին եւ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնին համապատասխան սահմանված ապրանքներ,

«անդամ պետությունների նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկա»՝ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների առեւտրատնտեսական հարաբերությունների ամբողջություն անդամ պետությունների տարածքներում նավթի եւ նավթամթերքի արդյունահանման, փոխադրման, մատակարարման, վերամշակման եւ իրացման ոլորտում, որոնք անհրաժեշտ են անդամ պետություններին՝ դրանց պահանջարկը բավարարելու համար,

«Միությունում նավթի եւ նավթամթերքի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռներ»՝ գազի, նավթի եւ նավթամթերքի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների ձեւավորման մեթոդաբանությամբ սահմանվող կանխատեսման ցուցանիշների համակարգ,

«նավթի եւ նավթամթերքի փոխադրում»՝ նավթի եւ նավթամթերքի տեղափոխմանն ուղղված գործողությունների իրականացում ցանկացած եղանակով, այդ թվում՝ խողավակաշարային տրանսպորտի օգտագործմամբ՝ ուղարկողից դրա ընդունման կետից մինչեւ ստացողին հանձնելու կետը՝ ներառյալ դատարկելը, լցնելը, այլ փոխադրամիջոցի վրա վերաբեռնելը, պահելը, խառնելը:

3. Միությունում նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաներ ձեւավորելիս՝ անդամ պետություններն առաջնորդվում են հետեւյալ հիմնական սկզբունքներով.

1) փոխադարձ առեստրում քանակական սահմանափակումներ եւ արտահանման մաքսատուրքեր, (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ հավաքագրումներ) չկիրառելը: Միության մաքսային տարածքի սահմաններից նավթի եւ նավթամթերքի արտահանման մաքսատուրքերի վճարման կարգը սահմանվում է անդամ պետությունների առանձին, այդ թվում՝ երկկողմ համաձայնագրերով,

2) անդամ պետությունների՝ նավթի եւ նավթամթերքի պահանջարկի առաջնահերթ բավարարումը,

3) անդամ պետություններում նավթին եւ նավթամթերքին առնչվող նորմերի ու ստանդարտների միասնականացումը,

4) բնապահպանական անվտանգության ապահովումը,

5) Միության՝ նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաների տեղեկատվական ապահովումը:

4. Միության՝ նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաների ձեւավորման ուղղությամբ անդամ պետություններն իրականացնում են հետեւյալ համալիր միջոցառումները.

1) տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծումը մաքսային տեղեկատվության հիման վրա, որը ներառում է փոխադրամիջոցների բոլոր տեսակներով նավթի եւ նավթամթերքների մատակարարումների, արտահանման ու ներմուծման մասին տվյալներ,

2) վերահսկողության մեխանիզմների ստեղծում՝ սույն Արձանագրության պայմանների խախտումը կանխելու նպատակով,

3) անդամ պետություններում նավթին եւ նավթամթերքին առնչվող նորմերի ու ստանդարտների միասնականացումը:

5. Սույն Արձանագրության 4-րդ կետում նշված միջոցառումներն իրականացվում են անդամ պետությունների կամ դրանց լիազոր մարմինների կողմից համապատասխան միջազգային պայմանագրերի շրջանակներում մեթոդաբանություն կամ կանոններ պարունակող փաստաթղթեր ստորագրելու միջոցով:

6. Անդամ պետությունների միջեւ կնքված միջազգային պայմանագրերի համաձայն՝ անդամ պետությունները, իրենց ունեցած տեխնիկական հնարավորությունների սահմաններում, ապահովում են հետեւյալ պայմանները՝

1) արդյունահանված նավթի եւ դրանից արտադրված նավթամթերքի երկարաժամկետ փոխադրումն իրականացնելու երաշխավորված հնարավորություն անդամ պետությունների տարածքներում գործող փոխադրման համակարգով, այդ թվում՝ մագիստրալային նավթամուղների եւ նավթամթերքի խողովակաշարերի համակարգերով,

2) անդամ պետությունների տարածքներում գրանցված տնտեսավարող սուբյեկտների համար յուրաքանչյուր անդամ պետության տարածքում տեղակայված նավթի եւ նավթամթերքի փոխադրման համակարգի հասանելիություն՝ նույն պայմաններով, ինչով, որ դրանք հասանելի են այն անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների համար, որի տարածքով իրականացվում է նավթի եւ նավթամթերքի փոխադրումը:

7. Նավթամուղների ու նավթամթերքի խողովակաշարերի համակարգով նավթի եւ նավթամթերքի փոխադրման սակագները սահմանվում են յուրաքանչյուր անդամ պետության օրենսդրության համաձայն:

Անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար նավթի եւ նավթամթերքի փոխադրման սակագները սահմանվում են այն սակագները չգերազանցող մակարդակի վրա, որոնք սահմանվել են այն անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների համար, որի տարածքով իրականացվում է նավթի եւ նավթամթերքի փոխադրումը:

Անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար նավթի եւ նավթամթերքի փոխադրման սակագների սահմանումը, որոնք ավելի ցածր են, քան այն անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված սակագները, որի տարածքով իրականացվում է նավթի եւ նավթամթերքի փոխադրումը, պարտավորություն չէ անդամ պետությունների համար:

8. Անդամ պետությունների լիազոր մարմինները, գազի, նավթի եւ նավթամթերքի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների ձեւավորման մեթոդաբանության համաձայն, Հանձնաժողովի մասնակցությամբ մշակում ու համաձայնեցնում են.

յուրաքանչյուր տարի մինչեւ հոկտեմբերի 1-ը՝ հաջորդ օրացուցային տարվա համար Միության՝ նավթի եւ նավթամթերքի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռները,

Միության՝ նավթի եւ նավթամթերքի երկարաժամկետ ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռներ, որոնցում, անհրաժեշտության դեպքում, կարող են ճշգրտումներ կատարվել՝ հաշվի առնելով անդամ պետություններում նավթի արդյունահանման, նավթամթերքի արտադրության եւ սպառման ոլորտում տեղի ունեցած փաստացի փոփոխությունները:

Անդամ պետություններից մեկի տարածքում արդյունահանված նավթի՝ այլ անդամ պետության տարածքով փոխադրման ծավալներն ու ուղղությունները,

յուրաքանչյուր տարի սահմանվում են անդամ պետությունների լիազոր մարմինների միջեւ արձանագրություններով:

9. Անդամ պետությունների՝ նավթի եւ նավթամթերքի ներքին շուկաների կարգավորումն իրականացվում է անդամ պետությունների ազգային մարմինների կողմից: Անդամ պետություններն իրականացնում են միջոցառումներ նավթի եւ նավթամթերքի շուկաների ազատականացման համար՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն:

10. Սույն Արձանագրության դրույթները չեն ազդում անդամ պետությունների՝ միջազգային այն պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտավորությունների վրա, որոնց մասնակիցն են իրենք:

11. Պայմանագրի XVIII բաժնի դրույթները կիրառվում են նավթի եւ նավթամթերքի փոխադրում իրականացնող՝ բնական մենաշնորհի սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով սույն Արձանագրությամբ նախատեսված առանձնահատկությունները:

12. Միության՝ նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաների ձեւավորման վերաբերյալ՝ Պայմանագրի 84-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում գործում են նավթի եւ նավթամթերքի մատակարարումների, արտահանման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ հավաքագրումների) սահմանման ու վճարման կարգի ոլորտում անդամ պետությունների միջեւ կնքված երկկողմ համաձայնագրերը, եթե համապատասխան անդամ պետություններն այլ բանի մասին չպայմանավորվեն:
